Կարգապահական գործ թիվ ԿԳ-23002

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԴԱ ԳԱԳԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահե Աստվածատրյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Հայկ Սահակյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ դիմող Նարինե Նրգեյանի և փաստաբան Լիդա Հակոբյանի,

քննության առնելով փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1038), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Նարինե Նրգեյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)**, հայտնել է, որ 31.08.2022թ. փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագիր է կնքել Փաստաբանի հետ:

Դիմողը հայտնել է, որ նշված պայմանագրի համաձայն՝ Լիդա Հակոբյանը պետք է հայցադիմում ներկայացներ դատարան 4 հայցապահանջով, որի պետական տուրքը կազմել է 80.000 ՀՀ դրամ: Նշված գումարը Դիմողը փոխանցել է Լիդա Հակոբյանին 31.08.2022թ., իսկ այնուհետև փոխանցել է պայմանագրով նախատեսված աշխատանքի գումարը՝ 260.000 ՀՀ դրամ չափով, որը ներառում էր աշխատանքի ողջ ծավալը:

Դիմողը հայտնել է նաև, որ 40.000 ՀՀ դրամ է փոխանցել փաստաբանին Երևանի քաղաքապետարանից ինչ-որ փաստաթուղթ ստանալու համար, սակայն վճարման

անդորրագիրը ներկայացնելու մասին Դիմողի պահանջն առ այսօր մնում է անպատասխան:

Դիմողը նաև նշել է, որ հայցադիմումը, որը պետք է դատարան ներկայացվեր 31.08.2022թ., ներկայացվել է դատարան 2022թ-ի դեկտեմբերին՝ 4 ամիս ուշացումով:

Դիմողի պնդմամբ, ինքը հրաժարվել է իր փաստաբանի ծառայություններից, քանի որ դժգոհ է դրանց մատուցման որակից՝ հայցը դատարան է ներկայացվել թերի, պետական տուրքը փաստաբանը վճարել է միայն մեկ պահանջի համար, մինչդեռ պետք է վճարեր 4 պահանջի համար:

Դիմողը հավելել է, որ փաստաբան Լիդա Հակոբյանը ներկայումս խաբում է իրեն, աշխատանքը կատարել է թերի, անբարեխիղճ և չի վերադարձնում գումարները:

Միաժամանակ, կարգապահական վարույթի շրջանակներում 15.03.2023թ. Դիմողը ներկայացրել է 02.12.2022թ. Փաստաբանին հասցեագրված գրության պատճենը՝ գումարը վերադարձնելու և նրա ծառայությունների հրաժարվելու պահանջի մասին, իր և Փաստաբանի հաղորդագրությունների և 31.08.2022թ. պայմանագրի պատճենները:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Լիդա Հակոբյանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Նարինե Նրգեյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2023թ. հունվարի 20-ին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ «ԼԻԴԷՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և Դիմողի միջև կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագիր, որի համաձայն՝ Փաստաբանը պետք է պատվիրատուի համար կազմեր հայցադիմում, հանդես գար դատարանում, կազմեր փաստաթղթեր, ձեռք բերեր փաստաթղթեր, դիմեր ՀՀ Ոստիկանության Էրեբունու բաժին, ստանար համապատասխան փաստաթղթեր, հանդես գար Կադաստրի Կոմիտեում, դիմեր և ստանար կադաստրային փաստաթղթեր, իսկ Դիմողը նշված գործողությունների համար պետք է վճարեր 260.000 ՀՀ դրամ:

Փաստաբանը նշել է, որ 01.09.2022թ. դրամարկղի ելքի օրդերի և լրացուցիչ համաձայնագրի համաձայն՝ 01.09.2022թ. վճարվել է 130.000 ՀՀ դրամ, իսկ մյուս 130.000 ՀՀ դրամը պետք է վճարվեր 05.09.2022թ.:

Փաստաբանը, անդրադառնալով դիմումում մեջբերված պնդմանն առ այն, որ *ինքը պետք է հայցադիմում ներկայացներ դատարան 4 հայցապահանջով, հայտնել է, որ թեև պայմանագիրը կնքվել է ընկերության տնօրեն Լիդա Հակոբյանի միջև, այնուամենայնիվ, պայմանագրի որևէ կետով կամ ենթակետով առկա չէ դրույթ կամ կետ, որտեղ գրված լինի,*

որ փաստաբան Լիդա Հակոբյանը պարտավորվում է դատարան ներկայացնել 4 հայցապահանջով հայցադիմում:

Փաստաբանը հավելել է, որ Դիմողը պայմանագրի կնքման օրը ներկայացրել է իր իրավական խնդիրը, ինչից հետո Փաստաբանը նրան հայտնել է, որ նախնական ներկայացված պահանջը իր մեջ պարունակում է 4 պահանջ, որի համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի յուրաքանչյուր պահանջը կազմում է 20.000 ՀՀ դրամ (ընդհանուր 80.000 ՀՀ դրամ), սակայն պահանջներից մեկն առկա կլինի այն դեպքում, երբ ձեռք բերվի կադաստրային գործում առկա փաստաթղթերը և դրանք ուսումնասիրելուց հետո պարզ կդառնա անհրաժեշտ է վճարել ևս 20.000 ՀՀ դրամ, թե ոչ:

Նշվածից հետո, Դիմողը 31.08.2022թ. նախապես 80.000 ՀՀ դրամ պետական տուրքը կանխիկ վճարել է, որից 60.000 ՀՀ դրամը նույն օրը վճարվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի բաժանմունքում, իսկ 20.000 ՀՀ դրամը իր գիտությամբ չի վճարվել, մինչև կադաստրային գործի ստացումը:

Փաստաբանը նշել է, որ Դիմողը երբևէ չի վճարել 40.000 ՀՀ դրամ քաղաքապետարանից թղթեր վերցնելու համար, այլ ընդհանուր վճարել է 33.370 ՀՀ դրամ, որից 20.000 ՀՀ դրամ և 13.370 ՀՀ դրամ՝ փաստաթղթերի պատճենները ստանալու համար, իսկ նախապես վճարված 1000 ՀՀ դրամը Փաստաբանն իր խնայողություններից և միջոցներից է վճարել և Դիմողից հետ չի ստացել, ինչը հաստատվում է 03.10.2022թ. վճարման անդորրագրով:

Փաստաբանը նաև նշել է, որ Դիմողի քաղաքացիական պահանջն ուղղված է ք. Երևան Ծխախոտագործների 4 հասցեի հետ, հետևաբար 31.08.2022թ. պայմանագրի առարկան որևէ կապ չունի ք. Երևան Ծխախոտագորխների 4/1 հասցեի հետ, իսկ Դիմողի վճարված 33.070 ՀՀ դրամը որևէ կապ չունի կնքված պայմանագրի հետ:

Փաստաբանը, անդրադառնալով Դիմողի պնդմանն առ այն, որ 31.08.2022թ. ներկայացվելիք հայցադիմումը դատարան է ներկայացվել 2022 թվականի դեկտեմբերին՝ 4 ամիս ուշացումով, չի համապատասխանում իրականությանը:

Փաստաբանի պնդմամբ, հայցադիմումը ներկայացվել է դատարան 2022թ. հոկտեմբերի 21-ին, իսկ մինչ այդ ինքը ձեռնամուխ է եղել պայմանագրով սահմանված ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ գործողություններ կատարելուն, որը տևել է մեկ ամիս 20 օր (որից 5 օրը Փաստաբանը եղել է անաշխատունակության թերթիկով բուժման մեջ):

Փաստաբանի պնդմամբ, Դիմողը քաջատեղյակ է եղել 29.09.2022թ. հայցադիմումի դատարան մուտք չլինելու փաստի մասին, քանի որ Փաստաբանը առաջարկել էր մինչև հայցադիմում ներկայացնելը հրավիրել փորձագետ կամ մասնագետ՝ վիճելի պահանջի տարածքը նայելու, առկա խնդրի վերաբերյալ մասնագիտական կարծիք, կամ արտադատական կարգով փորձաքննություն անցկացնելու համար, որին Դիմողը համաձայնվել և խնդրել է ժամանակ՝ իր միջոցներով և կապերով փորձագետ գտնելու

համար, ինչից հետո 28.09.2022թ. Դիմողը հաղորդագրության միջոցով տրամադրել է փորձագետ Արմենակի բջջային հեռախոսահամարը, և խնդրել է նրա հետ խորհրդակցել, քանի որ վերջինս չի կարողանում խնդիրը ներկայացնել: Նշվածից հետո Դիմողն անհասկանալի պատճառներով, հրաժարվել է փորձաքննություն իրականացնելուց՝ հայտնելով, որ այն կարվի դատական կարգով, հետևաբար հայցը կներկայացվի առկա ապացույցներով, ինչն էլ Փաստաբանը կատարել է 29.10.2022թ. Դիմողի պահանջով:

Փաստաբանը՝ անդրադառնալով իր կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ Դիմողի հայտնած դժգոհությանը, հավելել է, որ հայցադիմումը 29.10.2021թ. դատարան ներկայացվելու ժամանակ պետական տուրքի կտրոններից մեկը՝ թիվ 62457688, թյուրիմացաբար չի կցվել, սակայն այն նկատելուց անմիջապես հետո Փաստաբանը դիմում-միջնորդությամբ 31.10.2022թ. դատարանի էլեկտրոնային հասցեին ուղարկել է և տեղեկացրել նախագահող դատավորի կազմին, իսկ բնօրինակը «Հայփոստ ՓԲԸ-ի միջոցով ուղարկել է Դատարանի հասցեին, սակայն դատարանը 07.11.2022թ. կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում, ինչից հետո օրենքով սահմանված կարգով և ժամկետում հայցադիմումն՝ երկու պահանջներով կրկին ներկայացվել է դատարան և ընդունվել է վարույթ:

Փաստաբանը հավելել է, որ Դիմողի պնդումներն անհիմն են, չեն համապատասխանում գործում առկա նյութերին, և անգամ հայցադիմումը թերություններով ներկայացնելը Դիմողի իրավունքի խախտում երբևէ չի կարող դիտարկվել, քանի որ հայցադիմումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների խախտմամբ՝ թերի ներկայացնելու համար սահմանել է կարգ, որով տրվում է կողմին հնարավորություն սահմանված ժամկետներում վրիպակներն ու սխալները վերացնելու և կրկին ներկայացնելու համար: Հայցադիմումը վարույթ է ընդունվել ոչ թե 2023 թվականի դեկտեմբերի 6-ին, այլ՝ սկզբնական ներկայացման օրվանից 29.10.2023թ.:

Անդրադառնալով վճարված գումարը վերադարձնելու մասին Դիմողի պահանջին՝ Փաստաբանը նշել է, որ Դիմողը նման պահանջ չի ներկայացրել, բացառությամբ նախապես վճարված պետական տուրքի՝ 40.000 ՀՀ դրամի, որն ընդունվել է, սակայն Դիմողը չի ներկայանում ընկերություն այն հետ ստանալու համար:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանն ըստ էության պնդել է իր նախկինում ներկայացված դիրքորոշումը:

Միաժամանակ, Փաստաբանը հավելել է, որ Դիմողի կողմից իրեն բնօրինակ փաստաթղթեր տրված չեն եղել, որպիսի պայմաններում նման փաստաթղթերը վերադարձնելու պարտավորություն չէր կարող ունենալ, իսկ իրեն տրված փաստաթղթերի պատճենները լուսապատճենների տեսքով ուղարկվել են Դիմողի էլեկտրոնային փոստի հասցեով:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 20.01.2023թ. թիվ 24-Ա/ԿԳ-23002 որոշմամբ փաստաբան Լիդա Հակոբյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.2, 3.5.5 և 3.8.4 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

26.01.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 27.03.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել Նարինե Նրգեյանի կողմից փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրից հրաժարվելու փաստը, Փաստաբանի կողմից պայմանագրի 2 և 2.1 կետերով ստանձնած պարտավորությունները (բացառությամբ հայցադիմում կազմելուց և դատարան հասցեագրելուց) կատարած չլինելու փաստը, Փաստաբանի կողմից հայցադիմումը մինչև դատարան ներկայացնելու համար պայմանագրով սահմանված ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ գործողություններ կատարելու փաստը, Փաստաբանի կողմից պայմանագիրը լուծելուց հետո պայմանագրով ստացած հոնորարի մի մասը Դիմողին չվերադարձնելու փաստը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 27.03.2023թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 27.04.2023թ. ժամը 19:00-ին, 18.05.2023թ. ժամը 20:00-ին և 31.05.2023թ. ժամը 20:35-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Փաստաբան Լիդա Հակոբյանը ստանձնել է Նարինե Նրգեյանի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է փաստաբան Լիդա Հակոբյանի և*

Նարինե Նրգեյանի միջև 31.08.2022թ. կնքված թիվ Ն/Ն 1 2022 պայմանագրի պատճենով:

- Պայմանագրի գինը կազմել է 260.000 ՀՀ դրամ, որից 130.000 ՀՀ դրամը Դիմողի կողմից վճարվել է 01.09.2022թ., իսկ մյուս 130.000 ՀՀ դրամը պետք է վճարվեր 05.09.2022թ.: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությամբ: Պայմանագրի գինը ամբողջությամբ վճարված լինելու հանգամանքը չի ժխտվել Փաստաբանի կողմից (Պայմանագրի 2.2. ենթակետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում գումարը վճարելու պահից):*

- Փաստաբանը 29.09.2022թ., 03.10.2022թ. դիմումներ է ներկայացրել Կադաստրի Կոմիտե՝ ՀՀ, ք.Երևան, Ծխախոտագործների 4/1 տուն հասցեում անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Նշված դիմումներին ի պատասխան 03.10.2022թ. Կադաստրի Կոմիտեի կողմից պահանջվել է նույնականացման համար լրացուցիչ տեղեկատվություն, իսկ 05.10.2022թ. տրամադրվել են համապատասխան անշարժ գույքի կադաստրային գործի պատճենները, որոնք կազմել են 469 էջ: *Սույն փաստը հաստատվում է փաստաբանի կողմից ՀՀ Կադաստրի կոմիտե հասցեագրված դիմումով և ՀՀ կադաստրի կոմիտեի գրությամբ:*

- Լիդա Հակոբյանը 02.09.2022թ. ՀՀ ոստիկանությունից պահանջել է Դիմողի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերի պատճենները, որոնք վերջինիս տրամադրվել են 14.09.2022թ.: *Սույն փաստը հաստատվում է փաստաբանի կողմից ՀՀ ոստիկանություն հասցեագրված դիմումով և ՀՀ ոստիկանության գրությամբ:*

- Լիդա Հակոբյանն այցելել է Դիմողի կողմից նշված վեճի առարկա հասցե: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

- 21.10.2022թ. Փաստաբանը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է հասցեագրել հայցադիմում՝ սեփականատիրոջ խախտված իրավունքը վերականգնելուն պարտավորեցնելու պահանջի մասին: *Սույն փաստը հաստատվում է հայցադիմումով, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից արտատպված քաղվածքով:*

- Նարինե Նրգեյանը փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրից հրաժարվել է: *Սույն փաստը հաստատվում է կողմերի միջև առկա նամակագրություններով, Փաստաբանին հասցեագրված դիմումով, Պալատին հասցեագրված դիմումով, որը Պալատի կողմից հասցեագրվել է Փաստաբանին:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Լիդա Հակոբյանը փաստաբան է հանդիսանում 16.10.2010թ. թվականից, և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում ունի 1 կարգապահական տույժ (տույժը ուժի մեջ մտած չէ):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Լիդա Հակոբյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված

վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը, թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

7.1. Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի խախտման մասով Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև պայմանագիրը լուծելիս պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք վստահորդին վերադարձնելը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Ավելին, կնքված պայմանագրի որոշակի առարկայի շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար և դրա վերաբերյալ կանոնավորապես տեղեկացնել իր վստահորդին՝ պատասխանելով նրան հետաքրքրող հարցերին: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն գործի շրջանակներում հաստատված փաստերը և ներկայացված ապացույցները վկայում են այն մասին, որ Փաստաբանը՝ 31.08.2022թ. պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակներում, պարտավոր էր կազմել հայցադիմում, հանդես գալ դատարանում, կազմել և ձեռք բերել փաստաթղթեր, դիմել Ոստիկանության Էրեբունու բաժնում պահանջել և ստանալ համապատասխան փաստաթղթեր, հանդես գալ Կադաստրի Կոմիտեում, դիմել և ստանալ համապատասխան փաստաթղթեր:

Կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովն արձանագրել է, որ Փաստաբանն իրեն տրված հանձնարարության շրջանակներում փաստացի այցելել է Դիմողի կողմից նշված վեճի առարկա հասցե:

29.09.2022թ., 03.10.2022թ. դիմումներ է ներկայացրել Կադաստրի Կոմիտե՝ ՀՀ, ք.Երևան, Ծխախոտագործների 4/1 տուն հասցեում անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Նշված դիմումներին ի պատասխան

03.10.2022թ. Կադաստրի Կոմիտեի կողմից պահանջվել է նույնականացման համար լրացուցիչ տեղեկատվություն, իսկ 05.10.2022թ. տրամադրվել են համապատասխան անշարժ գույքի կադաստրային գործի պատճենները, որոնք կազմել են 469 էջ:

02.09.2022թ. ՀՀ ոստիկանությունից պահանջել է Դիմողի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերի պատճենները, որոնք վերջինիս տրամադրվել են 14.09.2022թ.:

21.10.2022թ. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացրել է հայցադիմում՝ սեփականատիրոջ խախտված իրավունքը վերականգնելուն պարտավորեցնելու պահանջի մասին (թիվ ԵԴ/54698/02/22 քաղաքացիական գործ): Նշված գործով դատարանը 07.11.2022թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է, ինչից հետո այն Փաստաբանի կողմից կրկին ներկայացվել է դատարան 25.11.2022թ.: Նշվածի արդյունքներով դատարանի 06.12.2022թ. որոշմամբ ընդունվել է վարույթ: Թիվ ԵԴ/54698/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում 16.12.2022թ. ներկայացվել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն, իսկ հիշյալ քաղաքացիական գործն այս պահին գտնվում է ընթացքի մեջ:

Նշվածի լույսի ներքո Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Փաստաբանն ըստ էության իրեն տրված հանձնարարության շրջանակներում կատարել է որոշակի գործողություններ ուղղված Դիմողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը: Ավելին, 31.08.2022թ.-ից՝ պայմանագիրը կնքելու օրվանից հետո ողջամիտ ժամկետներում, հետամուտ է եղել իր վստահորդի շահերի պաշտպանությանը և հիշյալ գործողությունների կատարումից հետո՝ 21.10.2022թ. ներկայացրել է հայցադիմում: Ընդ որում, դատարանի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման ընդունման հանգամանքն ինքնին չի կարող դիտարկվել որպես բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու հանգամանք, քանի որ յուրաքանչյուր փաստաբանի համար բարեխիղճ իրավական օգնություն ցուցաբերելու բաղկացուցիչ մաս է կազմում ոչ միայն անհրաժեշտ գործողությունների կատարումը, այլ նաև վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրությունը, ինչով էլ պայմանավորված է դրա կատարման արդյունավետությունը:

Ավելին, հատկանշական է, որ հայցադիմումը որոշակի թերություններով ներկայացնելու դեպքում օրենսդրությամբ նախատեսված է այն վերադարձնելու և կրկին ներկայացնելու իրավական հնարավորությունը, որպիսի պայմաններում՝ հայցադիմումը վերացված թերություններով համարվում է ընդունված դրա սկզբնական ներկայացման օրով: Այսինքն, հայցադիմումի մեջ որևէ թերության առկայությունը և այդ հիմքով հայցադիմումի վերադարձը, որպես ընդհանուր կանոն, անձի համար անդառնալի բացասական որևէ հետևանք չեն առաջացնում, քանի որ օրենքով սահմանված է հայցադիմումի թերությունները վերադարձնելու և այն կրկին ներկայացնելու

հնարավորություն, որից օգտվելու դեպքում հայցադիմումը դատարանի կողմից ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:

Նման պայմաններում, նաև հաշվի առնելով, որ հայցադիմումը Փաստաբանի կողմից թերությամբ ներկայացնելն ու դրա բերումով վերադարձվելը Դիմողի համար անդառնալի բացասական որևէ հետևանք չեն առաջացրել, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում փաստացի բացակայում են Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները՝ հաշվի առնելով, որ Դիմողը չի ներկայացրել որևիցե ապացույց առ այն, որ Փաստաբանի կողմից դրսևորվել է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու վարքագիծ:

7.1. Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի խախտման մասով Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ ի թիվս այլնի, վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Նշված դրույթն իր հերթին, փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում որոշակիություն և կանխատեսելիության համատեքստում՝ որպես իրավական երաշխիքներ նախատեսում է պայմանագիրը լուծելիս որոշակի գործողություններ փաստացի կատարված չլինելու դեպքում հոնորարի մի մասը վերադարձնելու փաստաբանի պարտավորությունը, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Այլ կերպ ասած, Կանոնագրքի նշված դրույթի կարգավորման կիրառման համար անհրաժեշտ է որոշակի վավերապայմանների միաժամանակյա առկայությունը, մասնավորապես՝

1. *Փաստաբանի և վստահորդի միջև **պայմանագիրը լուծված լինելը,***
2. *Փաստաբանի կողմից իրեն տրված հանձնարարության շրջանակներում **որոշակի գործողություններ կատարված չլինելը,***
3. *վճարված գումարը վերադարձնելու **հարցը պայմանագրով կարգավորված չլինելը**:*

Կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովը ընդգծում է այն հանգամանքը, որ Դիմողը՝ Փաստաբանին հասցեագրված 02.12.2022թ. գրությամբ փաստացի հրաժարվել է պայմանագրից, ինչպես նաև պահանջել է վերադարձնել պայմանագրով վճարված գումարը: Իր հերթին, Փաստաբանը Հանձնաժողովի նիստի ընթացքում հայտնել է դիրքորոշում այն մասին, որ սույն

կարգապահական վարույթը 20.01.2023թ. հարուցելուց հետո հետամուտ է եղել իր և Դիմողի միջև կնքված պայմանագրի լուծմանը:

Չնայած նրան, որ Դիմողի և Փաստաբանի միջև կնքված պայմանագիրը լուծված լինելու վերաբերյալ ներկայացվել են տարաբնույթ դիրքորոշումներ, այնուամենայնիվ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ նման պայմաններում հաստատապես հնարավոր է պնդել միայն Դիմողի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելու վերաբերյալ փաստը, ինչն իր հերթին հաստատվում է հենց Դիմողի կողմից ներկայացված 02.12.2022թ. գրությամբ և Պալատին 20.12.2022թ. ներկայացված դիմումով (Փաստաբանն իր հերթի տեղեկացվել է նշված դիմումի վերաբերալ): Ավելին, Հանձնաժողովը գտնում է, որ պայմանագրի լուծումը նախաձեռնած կողմին հաստատապես պարզելը նույնիսկ անհնար լինելու պարագայում տվյալ փաստը մնում է վիճելի, ինչն անմեղության կանխավարկածի ու դրանից բխող կանոնների հաշվառմամբ նշանակում է, որ հաստատված պետք է համարել Փաստաբանի համար բարենպաստ փաստը, որպիսին տվյալ դեպքում հանդիսանում է պայմանագրի լուծումը Դիմողի կողմից նախաձեռնված լինելու փաստը:

Բացի այդ, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Դիմողի և Փաստաբանի միջև 31.08.2022թ. կնքված պայմանագիրը լուծված լինելու և Փաստաբանի կողմից իրեն տրված հանձնարարության շրջանակներում որոշակի գործողություններ կատարված լինելու պայմաններում, պայմանագրի առարկայում նկարագրված գործողությունները փաստացի ամբողջ ծավալով չեն կատարվել՝ հաշվի առնելով առնվազն այն հանգամանքը, որ թիվ ԵԴ/54698/02/22 քաղաքացիական գործն այս պահին գտնվում է ընթացքի մեջ:

Միաժամանակ, անդրադառնալով Դիմողի և Փաստաբանի միջև կնքված պայմանագրի կարգավորումներին, Հանձնաժողովը արձանագրում է նաև այն, որ նշված պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ «Վճարման ենթակա գումարը ենթակա չէ ետ վերադարձման»: Հարկ է նաև նշել, որ անկախ նշված հանգամանքից Փաստաբանն ըստ էության պատրաստակամ էր Դիմողին վերադարձնել 50.000 ՀՀ դրամ, որպես փաստացի չկատարված աշխատանքի դիմաց վճարված գումար, ինչից Դիմողը հրաժարվել է՝ պահանջելով վճարված գումարի ամբողջական վերադարձ, ինչին Փաստաբանը համաձայն չէ՝ ի թիվս այլնի հիմք ընդունելով պայմանագրի վերոնշյալ կետը:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի կարգավորման կիրառման տրամաբանության ներքո բացակայում են դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը: Մասնավորապես՝ Դիմողի և Փաստաբանի միջև 31.08.2022թ. կնքված պայմանագրի շրջանակներում նշված հարցի կարգավորված լինելն ու այդպիսի կարգավորման բովանդակությունն արդեն իսկ բացառում են Փաստաբանի վարքագծում այդ ենթակետով սահմանված խախտման հատկանիշների առկայության հետագա քննարկման հնարավորությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննությամբ չի ապացուցվել, որ փաստաբան Լիդա Հակոբյանը Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել, ինչպես նաև այն փաստը, որ պայմանագիրը լուծելիս Դիմողին պետք է վերադարձներ հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, որպիսի պայմաններում Փաստաբանին վերագրվող վարքագծում ըստ էության բացակայում են Օրենքի և (կամ) Կանոնագրքի պահանջների խախտման հատկանիշները:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի (արտոնագիր՝ թիվ 1038) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-23002 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23002-3-Ա
31 մայիսի 2023թ.
ք.Երևան